



Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԷՆԵՐՋԻ ՓԱՌԵՐ ՖԼՈՌԻ»

Սահմանափակ Պատասխանատվությամբ
Ընկերություն

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

«Ֆոր Էյ Քոնսալթինգ» ՓԲԸ



"Four A Consulting" CJSC

ՀԱՊՀ	ՌԵԵՍՈՐՏ	ապրիլ 20 0219	accounting	advisory	assurance	NGO Register 1 20 0219
Հասցե	Նալբանդյան 50/136, ք Երևան ՀՀ,		www.4aconsulting.am		Address	Nalbandyan 50/136, Yerevan, RA
Հեռախոս	+374(10) 52 08 47		info@4aconsulting.am		Telephone	+374(10) 52 08 47

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

"Էներջի փառեր Ֆլուու" ՍՊԸ-ի մասնակցին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Էներջի փառեր Ֆլուու" ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

Կարծիքի հիմք

Աուդիտի անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԿ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԿ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամուտք են կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կյից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

20 փետրվար 2026թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ		1,619	1,884
Ոչ կյութական ակտիվներ		614	-
Ավանդներ	4	24,000	24,000
Հետաձգված հարկեր	5	-	2,268
		<u>26,233</u>	<u>28,152</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	248,294	101,694
Տրամադրված փոխառություն	7	546,207	497,210
Դրամական միջոցներ	8	1,733	1,015
		<u>796,234</u>	<u>599,919</u>
Ընդամենը ակտիվներ		<u>822,467</u>	<u>628,071</u>
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	9	1	1
Կուտակված շահույթ		56,986	38,166
		<u>56,987</u>	<u>38,167</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր		-	-
		<u>-</u>	<u>-</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	10	131,642	28,920
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	624,476	560,984
Շահութահարկի պարտավորություն		9,362	-
		<u>765,480</u>	<u>589,904</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>822,467</u>	<u>628,071</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են փետրվարի 20-ին 2026թ.՝

Վազգեն Բաբախանյան

Տնօրեն



Վարսենիկ Հարությունյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պատրաստվել է ընթերցմի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ	12	224,363	25,699
Վաճառքի ինքնարժեք	13	(67,961)	(22,018)
Համախառն շահույթ		156,402	3,681
Այլ եկամուտ		-	2
Իրացման ծախսեր	14	(72,964)	(20)
Վարչական ծախսեր	15	(18,611)	(16,281)
Այլ ծախսեր	16	(482)	(55)
Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս		64,345	(12,673)
Փոխարժեքային տարբերություններ, զուտ	17	1,933	18,160
Ֆինանսական եկամուտ/ծախս, զուտ	18	70	26
Շահույթ մինչև հարկերը		66,348	5,513
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	19	(11,630)	2,268
Տարվա շահույթ		54,718	7,781
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ <i>Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին</i>			
<i>Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		54,718	7,781

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	1	30,385	30,386
Տարվա շահույթ 2024թ.	-	7,781	7,781
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	7,781	7,781
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	38,166	38,167
Տարվա շահույթ 2025թ.	-	54,718	54,718
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	54,718	54,718
Շահաբաժիններ	-	(35,898)	(35,898)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	56,986	56,987

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	54,718	7,781
Ճշգրտումներ		
Մաշվածություն	651	1,331
Շահութահարկի գծով փոխհատուցում	11,630	(2,268)
Ֆինանսական ծախս	(70)	(26)
Փոխարժեքային տարբերությունից վնաս/շահույթ	(1,933)	(18,160)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	64,996	(11,342)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(143,461)	84,419
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	63,492	(57,696)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(14,973)	15,381
Վճարված տոկոսներ	70	26
Վճարված շահութահարկ	-	(7,795)
Գործառնական գործունեությունից ստացված գուտ դրամական միջոցներ	(14,903)	7,612
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների, Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,000)	(2,154)
Տրամադրված փոխառություններ	100,400	(32,100)
Ներդրումային գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ	99,400	(34,254)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից գուտ մուտքեր	(48,997)	26,542
Շահաբաժինների վճարում	(35,898)	-
Ֆինանսական գործունեության համար օգտագործված գուտ դրամական միջոցներ	(84,895)	26,542
Դրամարկդում և բանկերում մնացորդների գուտ աճ	(398)	(100)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1,116	13
Մնացորդներ դրամարկդում և բանկերում տարվա սկզբում	1,015	1,102
Մնացորդներ դրամարկդում և բանկերում տարվա վերջում	1,733	1,015

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Էներջի փաուեր Ֆլոու" ՍՊԸ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2022թ. մարտի 28-ին:

Ընկերության միակ բաժնետերն է.

ՀՀ քաղաքացի Վազգգեն Բարսիսյան

Մասնակցություն

100%:

Ընկերության գործունեությունն է էլեկտրաէներգետիկական շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարումը և մեծածախ առևտուրը, տարբեր ապրանքների վաճառքը:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022թ. հուլիսի 06-ի որոշմամբ "Էներջի Սփլայ" ՍՊԸ-ն ստացել է էլեկտրաէներգիայի մեծածախ վաճառքի լիցենզիա մինչև 07.07.2032թ.:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022թ. դեկտեմբերի 21-ի որոշմամբ "Էներջի Փաուեր Ֆլոու" ՍՊԸ-ն ստացել է էլեկտրաէներգիայի մեծածախ վաճառքի լիցենզիա մինչև 21.12.2042թ.:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025թ. օգոստոսի 20-ի որոշմամբ "Էներջի Փաուեր Ֆլոու" ՍՊԸ-ն ստացել է էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա մինչև 21.08.2040թ.:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Տավուշի Մարզ, ք. Դիլիջան, Կամոի փ., տ. 155:

2025թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 3 մարդ (2024թ՝ 4 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.8711	3.71
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Եվրո	449.01	413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլիսամապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ
Այլ միջոցներ

1 տարի
8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Վարձակալված ակտիվներ

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք ապագա վարձավճարների ներկա արժեքով: Վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող զինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

III. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

IV. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը նվճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

V. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն

արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.10 Հասույթի ճանաչում

Ընկերության հասույթն առաջանում է էլեկտրաէներգետիկական շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարումից և մեծածախ առևտուրից, տարբեր ապրանքների վաճառքից:

4 Ավանդներ

Ընկերությունը 19.11.2024թ. Ամիո Բանկ ՓԲԸ-ում համաձայն A24 35035 ավանդային պայմանագրի ներդրել է 18,630 հազ. դրամ ավանդ, տարեկան 9,25% տոկոսադրոյքով և 444 օր ժամկետով:

Ընկերությունը 19.11.2024թ. Ամիո Բանկ ՓԲԸ-ում համաձայն A24 35036 ավանդային պայմանագրի ներդրել է 5,370 հազ. դրամ ավանդ, տարեկան 10% տոկոսադրոյքով և 811 օր ժամկետով:

5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	2,268	-
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	(2,268)	2,268
Տարեվերջի մնացորդ	-	2,268

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հարկային վնաս	2,268	(2,268)	-
	2,268	(2,268)	-
Հետաձգված հարկային պարտավորություններ			
	-	-	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	2,268	(2,268)	-

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հարկային վնաս	-	2,268	2,268
	-	2,268	2,268
Հետաձգված հարկային պարտավորություններ			
	-	-	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	-	2,268	2,268

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր	243,342	89,641
Տրված կանխավճարներ	3,900	9,222
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,052	2,831
	248,294	101,694

7 Տրամադրված փոխառություն

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
Վազգեն Բաբախանյան	546,207	480,210
Ռոռուկունատրակտ ՍՊԸ	-	17,000
	546,207	497,210

31.12.2025թ. դրությամբ Վազգեն Բաբախանյանին-բաժնետեր տրված անտոկոս փոխառության մնացորդը կազմում է 546,710 հազ. դրամ, մարման ժամկետը՝ 17.10.2026թ.:

8 Դրամական միջոցներ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար դրամ		
Դրամարկդ	135	135
Մնացորդներ բանկերում	1,598	880
	1,733	1,015

9 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

	Սովորական բաժնետոմսեր 2025թ.	Սովորական բաժնետոմսեր 2024թ.
Սովորական բաժնետոմսեր քանակը (հատ)		
Սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը (դրամ)	1	1
Ընդամենը (հազար դրամ)	1	1

Ընկերությունը 2025թ. վճարել է 35,898 հազ. դրամ շահաբաժին՝ Վազգեն Բաբախանյանին-բաժնետեր:

10 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Փոխառություններ	131,642	28,920	-	-
	131,642	28,920	-	-

Համաձայն 20.11.2024թ. ընկերության և Էկրա Կովկաս ՍՊԸ-ի միջև կնքված փոխառության պայմանագրի Էկրա Կովկաս ՍՊԸ-ն ընկերությանը տրամադրում է 2,000,000 ռուբլի փոխառություն, անտոկոս, մինչև 20.11.2025թ.:

Համաձայն 18.11.2024թ. ընկերության և Էկրա Կովկաս ՍՊԸ-ի միջև կնքված փոխառության պայմանագրի Էկրա Կովկաս ՍՊԸ-ն ընկերությանը տրամադրում է 800 հազ. դրամ փոխառություն, անտոկոս, մինչև 18.11.2025թ.:

Համաձայն 18.11.2024թ. ընկերության և Էկրա Կովկաս ՍՊԸ-ի միջև կնքված փոխառության պայմանագրի Էկրա Կովկաս ՍՊԸ-ն ընկերությանը տրամադրում է 14,000 հազ. դրամ փոխառություն, անտոկոս, մինչև 18.11.2025թ.:

Համաձայն 12.12.2025թ. ընկերության և Էկրա Կովկաս ՍՊԸ-ի միջև կնքված փոխառության պայմանագրի Էկրա Կովկաս ՍՊԸ-ն ընկերությանը տրամադրում է 2,000 հազ. դրամ փոխառություն, անտոկոս, մինչև 12.06.2026թ.:

Համաձայն 17.11.2025թ. ընկերության և Էկրա Կովկաս ՍՊԸ-ի միջև կնքված փոխառության պայմանագրի Էկրա Կովկաս ՍՊԸ-ն ընկերությանը տրամադրում է 10,000 հազ. դրամ փոխառություն, անտոկոս, մինչև 17.11.2026թ.:

Համաձայն 09.12.2025թ. ընկերության և Էկրա Կովկաս ՍՊԸ-ի միջև կնքված փոխառության պայմանագրի Էկրա Կովկաս ՍՊԸ-ն ընկերությանը տրամադրում է 1,000 հազ. դրամ փոխառություն, անտոկոս, մինչև 09.03.2026թ.:

Համաձայն 16.10.2025թ. ընկերության և Էկրա Կովկաս ՍՊԸ-ի միջև կնքված փոխառության պայմանագրի Էկրա Կովկաս ՍՊԸ-ն ընկերությանը տրամադրում է 100,000 հազ. դրամ փոխառություն, անտոկոս, մինչև 16.10.2026թ.:

31.12.2025թ. դրությամբ Էկրա Կովկաս ՍՊԸ-ից ստացած Փոխառության մնացորդը կազմում է 131,642 հազ. դրամ:

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	34,760	876
Ստացված կանխավճարներ	549,139	559,759
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	38,879	149
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	1,692	200
Այլ կրեդիտորական պարտքեր	6	-
	624,476	560,984

Ստացված կանխավճարը Ընկերությունը ստացել է ИКАР ООО-ից համաձայն պայմանագրի:

12 Իրացումից հասույթ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից հասույթ	60,763	25,699
Աշխատանքների կատարումից հասույթ	120,000	-
Ծառայություն. մատուցումից հասույթ	43,600	-
	<u>224,363</u>	<u>25,699</u>

13 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Էլ. էներգիա	-	20,939
Հումք և նյութեր	34,619	825
Օպերատորի ծառայություններ	-	254
Ծրագրային ապահովում	33,342	-
	<u>67,961</u>	<u>22,018</u>

14 Իրացման ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վճարման ծախսեր	72,954	-
Այլ ծախսեր	10	20
	<u>72,964</u>	<u>20</u>

15 Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասկացումներ աշխատակիցներին	15,051	12,326
Մաշվածություն և ամորտիզացիա	651	1,331
Գրասենյակային կոմունալ	600	600
Բանկային ծառայություններ	249	500
Խորհրդատվական ծախսեր	24	833
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	2,017	-
Այլ ծախսեր	19	691
	<u>18,611</u>	<u>16,281</u>

16 Ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	-	-
Ֆինանսական եկամուտ	70	26
Ֆինանսական ծախս, զուտ	<u>70</u>	<u>26</u>

17 Փոխարժեքային տարբերությունից վնաս/շահույթ

	2025թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
<i>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը</i>		
Դրամական միջոցներ	1,116	13
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	(273)
Վարկեր և փոխառություններ	(2,322)	340
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3139	18,080
	<u>1,933</u>	<u>18,160</u>

18 Շահութահարկի գծով ծախս

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	9,362	-
Հետաձգված հարկ (տես՝ ծանոթագրություն 5)	2,268	(2,268)
	<u>11,630</u>	<u>(2,268)</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/վնաս մինչև հարկումը (համաձայն ՓՄԿ ՖՀՄՍ)	66,348		5,513	
Շահութահարկ՝ 18%	11,943	18.00	992	18.00
դրույքաչափով				
Չնվազեցվող ծախսի ազդեցությունը	(313)	(0.47)	(3,260)	(59.13)
Շահութահարկի գծով փոխհատուցում	<u>11,630</u>	<u>17.53</u>	<u>(2,268)</u>	<u>(41.13)</u>

19 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում, ճանաչվել էր 2,268 հազար դրամի հետաձգված հարկեր: Հետաձգված հարկային ակտիվները ձևակերպվել էր հարկային վնասից:

20 Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	243,342	89,641
Տրամադրված փոխառություն	546,207	497,210
Մնացորդներ դրամարկդում և բանկերում	1733	1,015
	<u>791,282</u>	<u>587,866</u>

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ Վարկեր և փոխառություններ	131,642	28,920
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	36,458	1,076
	<u>168,100</u>	<u>29,996</u>

21 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

21.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են արտարժույթով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված

2025թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր	215,952	-	27,390	-
Տրամադրված փոխառություն	546,207	-	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,733	-	-	-
	<u>763,910</u>	<u>-</u>	<u>27,390</u>	<u>-</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Վարկեր և Փոխառություններ	121,900	-	-	9,742
Առևտրային կրեդիտորական պարտավորություններ	2,898	33,560	-	-
	<u>124,798</u>	<u>33,560</u>	<u>-</u>	<u>9,742</u>
Զուտ արդյունք	<u>639,094</u>	<u>(33,560)</u>	<u>27,390</u>	<u>(9,742)</u>
<i>Հոդված</i>				
2024թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր	64,394	-	25,247	-
Տրամադրված փոխառություն	497,210	-	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	258	724	-	33
	<u>561,862</u>	<u>724</u>	<u>25,247</u>	<u>33</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Վարկեր և Փոխառություններ	21,500	-	-	7,420
Առևտրային կրեդիտորական պարտավորություններ	679	397	-	-
	<u>22,179</u>	<u>397</u>	<u>-</u>	<u>7,420</u>
Զուտ արդյունք	<u>539,683</u>	<u>327</u>	<u>25,247</u>	<u>(7,387)</u>

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) դեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլար ազդեցություն		Եվրո		Ռուբլի	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	(3,356)	33	2,739	2,524	(974)	(739)

գ) Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

ե) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

22 Իրական արժեքի չափում

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

23 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն՝ առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով: Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը և փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 9- ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	56,987	38,167
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(1,733)	(1,015)
Կապիտալ	55,254	37,152
Ընդհանուր սեփական կապիտալ	56,987	38,167
Վարկեր և փոխառություններ	131,642	28,920
Ընդհանուր ֆինանսավորում	188,629	67,087
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.29	0.55

24 Պայմանականություններ

24.1 Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում

բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Ընկերության վրա այս գործոնները հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված ռիսկայնությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

24.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանի Հանրապետությունում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

24.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

25 Գործարքներ կապակցված կողմերի միջև

25.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Ընկերության բաժնետիրոջ կողմից:

25.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ
Աշխատավարձ

2025թ.	2024թ.
9,013	1,230